

Ա. ԱՐՄԵՆՅԱՆ

ԸՆՏԱՆԻ
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
ՔՈՍԼ

619:616.5

12136

Q - 91 Уральская, А.

Сибирь Красноярск
тнс.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏ ԳՅՈՒՂԱՏԱՏԵԿԱՆՈՒԹՅԱՆ, ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Ռ. ԱՐՄԵՆՅԱՆ

6191.616.5

Ա-91

ԱՍԴՀԱՎԱՐ է 1961 թ.

ՀԱՅԱՆԻ
ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՔՈՍԵ

ՀՀ 126

A. 16834



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Բնտանի կենդանիների քոսը	3
Թոս առաջացնող տգերը	3
Թոսի տարածումը	6
Զիերի քոսը	7
Խոշոր եղջերավար անասունների քոսը	8
Ոչխարների քոսը	9
Կանխելու միջոցառումներ	11
Ի՞նչ պետք է անել անասության մեջ քոս հայտնաբերվելու գեղագում	13
Թոսի քուժումը	17
Ախտահանում	29

Р. АРМЕНИЯН
ЧЕСОТКА СЕЛЬСКО-ХОЗЯЙСТВЕННЫХ ЖИВОТНЫХ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1948

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՔՈՍԸ

Քոսը մաշկային վարակիչ հիվանդություն է, որն առաջ է գալիս աչքով անտեսանելի տպերի միջոցով. այդ տպերը կարելի է տեսնել խոշորացույցի օգնությամբ:

Քոսից կենդանիները համեմատաբար քիչ են սատկում, սակայն այդ հիվանդության հասցրած տնտեսական վճառը շատ մեծ է, Քոսով հիվանդ կենդանիները նիհարում են և կաթը պակասեցնում: Բանող անառունները աշխատանքի համար հաճախ անընդունակ են դառնում, ոչխարների բուրդը փչանում է: Քոսով վարակված կաշիների արթեքն ընկնում է: Բուրդն ու կաշին, նախքան վերամշակման ենթարկելը, անհրաժեշտ է լինում ախտահասել, որը կապված է ծախսերի հետ և ազդում է ըրդի ու կաշվի որակի վրա:

Հիվանդների բուժման, վարակված շենքերի, լծառարքերի, խնամքի առարկաների ախտահանման համար զգալի ծախսեր են պահանջվում: Քոսով հիվանդ և կասկածելի կենդանիների մեկուսացումը, նրանց ինսամքի համար հատուկ անձնակազմ նշանակելը, քոսից անապահով տնտեսությունում կենդանիների ել ու մուտի սահմանափակումը և կարանտինային միջոցների կիրառումը խախտում են տնտեսության աշխատանքի նորմալ ընթացքը:

Բոլոր կոլխոզները, կոլխոզների և սովխոզների բանվորներն ու աշխատավորները պետք է լավ ճանաչեն քոս հիվանդությունը, իմանան նրա տարածման ճանապարհները և նրան կանխելու համար պահանջվող միջոցառումները:

ՔՈՍ ՍՈՍՉԱՅՆՈՂ ՏԶԵՐԸ

Քոս առաջացնող տղերը մի քանի տեսակ են, նրանցից ոմանք ապրում են մաշկի մեջ և այնտեղ իրենց համար ճանապարհներ փորում, իսկ օմանք էլ ապրում են մաշկի երեսին, կամ մազերի արմատներում և իրենց առաջացրած քոսով մեծ


անհանգստություն են պատճառում կենդանուն, առաջացնում
են մաշկի բորբոքում, վերքեր ու խոցեր:

Բոլոր տեսակի կենդանիները հիվանդանում են քոսով և
յուրաքանչյուր տեսակի կենդանի ունի իրեն հատուկ քոս առա-
ջացնող տպերի տեսակները: Այսոււամենայնիվ մի տեսակի
կենդանու քոսը կարող է անցնիլ մյուս տեսակի կենդանինե-
րին, իսկ կենդանիներից էլ անցնելով մարդուն կարող է մաշկի
հիվանդություն առաջացնել:

Քոս առաջացնող տպերին՝ կարելի է նշմարել 50 անգամ
մեծացնող խոշորացույցի միջոցով: Նրանք ունեն չորս զույգ
ոտքեր, ծծիչներ, կեռիկներ, ձանկեր և գլխի վրա՝ մաշկը ծակե-
լու և հյութ ծծելու հարմարանքներ:

Քոս առաջացնող տպերին ընդհանրապես բաժանում են
երեք տեսակի, որոնք իրենց կենարանական հատկություննե-
րով իրարից որոշ չափով տարբերվում են.

1. Մարմաջատիզ (клещ зудень) 2. Վերնամաշկային տիզ (клещ накожник) և 3. մաշկակեր տիզ (клещ кожеед)




Նկ. 1. Մարմաջատիզ

1. Մարմաջատիզ (նկ. 1.): Սրանց երկարությունը 0,2-ից
մինչև 0,5 միլիմետր է: Նրանք անվում են կենդանու արյու-
նով և հյութերով: Դրա համար նրանք ապրում են մաշկի վե-
րին շերտի մեջ և այնտեղ իրենց համար ոլորուն անցքեր են
փորում: Այդ անցքերի մեջ էդ տիզը ձու է ածում: Մեկ էդ
մարմաջատիզն օրական ածում է 2-3, երբեմն 4 ձու, իսկ ամ-
բողջ կյանքի ընթացքում՝ ընդհանունը 20-40 ձու: 2-7 օր հե-
տո այդ ձվերից գուրս են գալիս թթվալիներ, որոնք երեք ան-

գամ վորխում են իրենց մաշկը և ապա սկսում ձռւ ածել. Էդ մարմաջատղերի կյանքի տեսղությունը 6—8 շաբաթ է: Նըսանք, ինչպես նաև մյուս քոսի տղերը, իրենց ամբողջ կյանքըն անց են կացնում կենդանու մաշկի մեջ: Կենդանու մարմնից դուրս մարմաջատղերը չոր եղանակին 2—3 օրում սատկում են, իսկ խոնավ պայմաններում կարող են ապրել 15—18 օր: Մարմաջատղերն սկսում են տարածվել կենդանու մարմնի մազաղուրկ մասերից:


2. Վերնամաշկային տղեր
(նկ. 2.): Քոսի պարագիտների մեջ սրանք ամենախշորն են, որոնց երկարությունը հասնում է 0,5—0,8 միլիմետրի: Առջրում են ոչ թե կենդանու մաշկի մեջ, այլ նրա մակերեսին և մարմնի առավելապես պաշտպանված, այս սինքն մաղով խիտ ծածկված



մասերում և սնվում են արյունով ու ավելով: Վերնամաշկային տղերի ձվերից թրթուրները սովորաբար դուրս են գալիս 2, սակայն զեկոք երում՝ 3 օր հետո: Սրանք չորս անգամ վորխում են իրենց մաշկը և ձվից դուրս գալուց 9—10 օր հետո մկսում են ձռւ ածել: Վերնամաշկային տղերն ավելի զիմացկուն են: Կենդանու մարմնից դուրս նրանք կարող են ապրել մինչև 20 օր:

Նկ. 2. Վերնամաշկային տղիգ

3. Մաշկակեր տղեր (նկ. 3): Սրանց մարմնի երկարությունը 0,3-ից մինչև 0,5 միլիմետր է: Մաշկակեր տղերը մաշկի մեջ անցքեր չեն բացում. վերմաշկային տղերի նման ապրում են մաշկի մակերեսին. սնվում են վերնամաշկի բջիջներով և այն հեղուկով, որն արտաթորվում է մաշկի մաշկերեսը: Սրանց բազմացումը նման է վերնամաշկային տղերի բազմացմանը:



Նկ. 3. Մաշկակեր տղիգ

Մաշկակեր տղերն օրական ածում են 5 ձու, իսկ իրենց աժ-
բողջ կյանքի ընթացքում՝ մոտ 100 ձու։ Նրանք կենդանու
մարմնից դուրս կարող են ապրել 50—60 օր։

Քոսի տղերը չափաղանց արագ են բազմանում։ ըստ
կատարված հաշիվների քոսի մեկ էզ տղից երեք ամակա ըն-
թացքում կարող են զարգանալ մեկ ու կես միլիոն տիզ։

ՔՈՍԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Ինչպես տեսանք, քոսն առաջացնում են միայն հառուկ
քոսի տղերը։ Առանց այդ տղերի քոս չի կարող առաջանալ։

Կենդանիները քոսով կարող են հիվանդանալ ուղղակի շրփ-
ման միջոցով, այսինքն՝ երբ առողջ կենդանին շփում է քո-
սով հիվանդ կենդանու հետ։

Կենդանիները կարող են քոսով վարակվել նաև այն գեղ-
քում, երբ նրանց պահում են այնպիսի շենքերում, կամ արո-
տավայրերում, որտեղ գտնվում են, կամ եղել են քոսով հի-
վանդ կենդանիներ։

Կենդանիների վարակման պատճառ կարող են լինել նաև
քոսով հիվանդ կենդանիների հետ շփման մեջ գտնված իրերը,
օրինակ՝ գույլերը, անասնակապերը, վարակված կենդանիներին
խնամելու համար գործածվող զանազան իրերը և այլն։

Քոսի տարածմանը նպաստում են վարակված կենդանի-
ների համար գործածված լծասարքերը, հիվանդ կենդանիներին
խնամող մարդկանց հաղուստը, հիվանդների համար գործած-
ված ցամքարը, հիվանդ կենդանիների կերի մնացորդները, վա-
րակված գոմաղը, թրիքը և այլն։

Քոսը կարող է տարածվել նաև քոսով հիվանդ սատկած
կամ մորթված կենդանու կաշվի, բրդի և մազի միջոցով։

Վերջապես, քոսը կարող են տարածել նաև շներն ու հա-
վերը, եթե նրանք մուտք են գործում հիվանդ կենդանիների
ու ապա առողջ կենդանիների շենքերի մեջ։

Ինչպես ասացինք, քոսը կարող է անցնել նաև կենդանի-
ների մի տեսակից մյուսին։ Այսպիս, օրինակ, ձին կարող է
վարակվել ոչխարից, խողից, ուղտից, շնից, կատվից ու ճագա-
րից։ Խոշոր եղջերավոր անասունները մարմաջաքոսով կարող

ևն վարակվել ձիուց, ոչխարից, այծից ու խոզից: Ոչխարները մարմաջաքոսով կարող են վարակվել այծերից ու շներից, խոզերը՝ այծերից, շները՝ խոզերից, ոչխարներից, այծերից ու կատուներից:

Քոսի տղերը հիվանդ կենդանիներից մարդուն անցնելով կարող են մաշկի հիվանդություն առաջացնել, իսկ քոսով հիվանդ մարդը կարող է վարակել ձիուն, շանը և ճագարին:

Հաճախ քոսի տարածման պատճառ են դառնում կենդանիներին սպասարկող մարդիկ, որոնք հիվանդ կենդանուն խնամելուց հետո, առանց ձեռքերը, ոտնամաններն ու արտահագուստն ախտահաննելու, առողջ կենդանիներին խնամելով վարակում են նրանց:

Քոսը տարածվում է գլխավորապես ձմեռը, որովհետև կենդանիները գտնվում են գոմերում և շատ հեշտությամբ իրար վարակում են:

Նիհար և սոված կենդանիները, ինչպես նաև գառներն ու չորթերն ավելի ծանր են հիվանդանում և անուշադիր խնամելու դեպքում՝ նրանց մեծ մասը սատկում է:

Այժմ համառոտակի կանդ առնենք տալբեր տեսակի կենդանիների, ձիերի, խոշոր եղջերավոր անասունների և ոչխարների քոսի վրա:

ԶԻԵՐԻ ՔՈՍԸ

Զիերը կարող են հիվանդանալ քոսի երեք տեսակներով էլ, ուկայն ամենածանրը մարմաջաքոսն է:

Մարմաջաքոսն սկսում է ձիու մարմնի այն մասերից, որոնք շփում են ունենում ձիասարքի հետ, օրինակ՝ գլխից, վզից, ուսից, թիկունքից, իսկ այսուհետև նա արագորեն՝ տարածվում է մարմնի մյուս մասերը: Երկար մազերով ծածկված տեղերը (բաշը, պոչը) և ոտները տիզով սովորաբար չեն վարակվում: Մարմնի ախտահարված մասը սաստիկ քոր է գալիս, մանավանդ գիշերները տաք գոմերում, արեի տակ, կամ թե մարմինը ծածկված լինելու դեպքում: Տղեր եղած տեղերում առաջանում են շատ փոքրիկ հանգույցներ, որոնք սաստիկ քոր են առաջ բերում: Մաստիկ քորի հետևանքով գիշերները ձիերն իրենց քորում են

և հաճախ ախտահարված տեղերը կրծուում, որի հետեանքով մաշկը վիրազութում է: Քորը հետզ հետե սաստկանում է: Զիեւը շարունակում են քորվել կոշտ առարկաներով, պատերով՝ որի հետեանքով մաշկի վրա առաջանում են բշտիկներ: Այդ բշտիկները պատովում են և միջից գուրս է գալիս հեղուկ, որը մազերն իրար է կպցնում: Հեղուկը չորանալով վիրնամաշկի մասերի հետ կեղ է առաջացնում, մաշկն աստիճանաբար կոշտանում է, ճաքճքվում և ծալքեր է կազմում:

Եթե քոսը չի բուժվում, ձիու ամբողջ մարմինը վարակվում է, ձին աստիճանաբար նիհարում է և երեսն հյուծվածության հետեանքով սատկում:

Վիրնամաշկային բու: Այս քոսով ձիերը համեմատաբար քիչ են հիվանդանում: Քոսն առաջին հերթին ձիերի մարմինի մազով պաշտպանված մասերումն է լինում, օրինակ՝ բաշի և պոչի վրա, ծնողի տակ, ճակատի մազափնջի տակ. քոսը կարող է անցնել նաև մեջքը, վղին ու գավակը: Հիվանդության նըշանները նույնն են: Քոսի այս տեսակը համեմատաբար դանդաղ է տարածվում:

Մահակեր բու: Այս քոսը լինում է ձիու ոտքերի վրա, հաճախ ետևի ոտքերի կատանողի ծալքում և աստիճանաբար բարձրանում է վեր, սովորաբար մինչև վաղքահողը: Վարակված տեղերը կարմըսում և ծածկվում են թեփուկներով ու կեղերով: Քորվելու հետեանքով ձին աշխատում է ախտահարված տեղերն ատամներով բանել, որի պատճառով այդ տեղերն ուռչում են, մազերը թափվում, կեղեն է կազում, մաշկը կոշտանում է և նրա վրա լայնակի ծալքեր են գոյանում:

ԽՈՇՈՐ ԵՂՋԵԲԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔՈՍԸ

Խոշոր եղջերավոր անասունները նույնպես կարող են հիվանդանալ քոսի բոլոր տեսակներով, սակայն սրանց համար ամենավտանգավորը վիրնամաշկային քոսն է:

Մարմաջախօսն այսուեղ ավելի հազվադեպ է, զիմավորապես ախտահարում է կենդանու գլխի ու զգի մաշկը:

Վիրնամաշկային բուն սկսում է ախտահարել զգի վերին հատվածը, եղջրաբաժանի շուրջը, մեջքը, պոչաբաժինի շուրջը և

զզի երկու կողմերը: Կենդանու մազերն աստիճանաբար թափ-
վում են: Մաշկի վրա հանգույցներ, բշտիկներ, հաստ կեղեր են
գոյանում: Մաշկը հաստանում է, կոշտանում և վրան ծալքեր են
գոյանում: Քորվելու հետեանքով առաջանում են վերքեր կեն-
դանիներն աստիճանաբար նիհարում են և եթե ժամանակին
չբուժվեն ու լավ չխնամվեն, հյուծվածության հետեանքով
կարող են սատկել:

Հիվանդությունն ավելի վտանդալոր է մանավանդ հոր-
թերի համար. եթե նրանք ժամանակին չեն բուժվում ու լավ
չեն խնամվում, սատկողներն ավելի շատ են լինում:

Մաշակեր բուն ախտահարում է զլխավորապես պոչար-
ժատի և կապահողի ծալքի մակերեսը և ավելի թեթևէ անցնում:

ՈՉԻԱՐՆԵՐԻ ՔՈՍԸ

Ոչխարները զլխավորապես հիվանդանում են վերնամաշկա-
յին քոսով, հազվագյուտ դեպքում՝ մարմաջաքոսով և սա-
կավ՝ նաև մաշկակեր քոսով:

Մարմաջախօսը լինում է ոչխարների զլխի վրա՝ բրդազուրկ
մասերում. ուստի հաճախ կոչվում է «զլխի քոս»: Ծանր դեպ-
քերում մարմաջաքոսը կարող է տարածվել նաև առջևի ոտքե-
րի վրա և երբեմն կմծի ու փորի վրա: Մաշկի վարակված մա-
սերը քիչ ուռած են լինում, տաք և սկզբում հանգուցիկներով
ծածկված: Անունեան սաստիկ քորի հետեանքով կենդանին քըս-
վում է կոշտ առարկաներին, որից առաջանում են վերքեր
Այդ վերքերից արյուն է դուրս գալիս, որը միանալով վերնա-
մաշկի մահացած մասերի հետ չորանում է և ու գույնի կեղեր է
կապում:

Երբեմն վերքն անցնում է ոչխարի աշքի մեջ և նրան
կուրացնում:

Վերնամաշկային բոսը լինում է ոչխարների մարմնի բրդով
ծածկված մասերում, ուստի հաճախ սկզբում չի նկատվում: Ոչ-
խարի քոսի այս տեսակը մեծ արագությամբ անցնում է մի
ոչխարից մյուսին: Հիվանդությունը նկատվում է միայն այն
ժամանակ, եթե ոչխարի բուրդը թաղիքի (քեչայի) նման է

դառնում և խառնվում իրար, հիվանդի մարմինը սաստիկ քոր է գալիս, անսառունն այս ու այն կողմն է քսվում, կծոտում է մարմնի վարսակված տեղերը և վրայի բուրդը պոկոտում:

Այս տեսակի քոսն սկսում է մեջքի ուղղությամբ և տարածվում է վզի, գավակի և խիտ բրդով ծածկված այլ տեղերը: Մաշկի վրա առաջանում են կարմրավուն բծեր, հանգուցիկներ, և ապա բշտիկներ: Բշտիկները չորանալով գեղնավուն բարակ կեղեր են գոյացնում: Ոչխարի բուրդն սկսում է թափվել և մաշկի վրա մերկ տեղեր են առաջանում: Այդ տեղերում մաշկը հաստանում ու ծալքեր է կազմում (նկ. 4):

Ոչխարի քոսի այս տեսակը խիստ մեծ վնասներ է հասցնում ոչխարաբուծությանը: Ոչխարները սաստիկ նիհարում են: Էդ ոչխարները (մաքիները) դառնում են անկենտունակ՝ ծնելով թուլակագմ գառներ, կամ վիժում են: Բրդի մեծ մասն անպետքանում, փչանում է: Վաղ գարնանային եղանակներին այս կորուստն ավելի մեծ է լինում. հիվանդների մի զգալի մասը կարող է սատկել: Թոսի հանդեպ ավելի զգայուն են նրբագեղմ ոչխարները, իսկ գառները շատ արագ կերպով նիհարում են ու սատկում:



Նկ. 4.

Մաշկակեր քոսը լինում է գլխավորապես ոչխարի ոտքերի վրա, հազվագյուտ գեղքերում՝ մարմնի այլ մասերում. Վարակ-

ված մասերում մաշկը կարմրում է ու ծածկվում կեղով՝ և առաջին պահի վրա՝ երբեմն մինչև կուրծքը, իսկ առջեկի ոտքերի վրա՝ մինչև ծնկի հողը:

ԿԱՆԱԵԼՈՒ ՄԻԶՈՅԱՌՈՒՄՆԵՐ

Ինչպես բոլոր հիվանդությունների, այնպես էլ քոսի ժամանակ ավելի հեշտ և տնտեսավես ավելի ձեռնտու է կանխել հիվանդության նորաջացումը, այսինքն չթողնել, որ առողջ կենդանիները վարակվեն և հիվանդանան, և ապա նոր սկսել նրանց բուժիլ և հիվանդությունը վերացնել: Հիվանդների բուժումը և հիվանդության վերացումը ավելի գժվար է, ավելի շատ աշխատանք է պահանջում և տնտեսավես ավելի թանգ է նոտում:

Քոսի առաջացումը և տարածումը կանխելու հիմնական միջոցն է տնտեսության ղեկավարների կողմից անառնարուժաւսանիտարական և պրոֆիլակտիկ միջոցառումների կիրառումը. այն է՝

կենդանիներին պետք է պահել մաքուր, չոր, լուսավոր և ընդարձակ շենքերում, ամեն օր պետք է նրանց մաքրել, առանձվազն տասն օրը մեկ անգամ լողացնել (ամառային տաք եղանակին, իսկ ձմռանը՝ եթե համապատասխան շենքեր կան):

Առանձին ուշագրությամբ պետք է հետեւ նիհար կենդանիների մաշկին, ավելացնել նրանց կերը և բանող նիհար կենդանիներին ազատել աշխատանքից:

Կենդանիների պահպանման և ինամքի գործում չպետք է թույլ տալ ոչ մի դիմազը կություն. յուրաքանչյուր ձիռ կամ խոշոր եղջերավոր անառունի պետք է հատկացնել հատուկ տեղ, ամբանցել նրանց լծասարքը, խոզանակը, քերիչը, ջրելու դույը, թափը, սանձը և այլն:

Կենդանիներին չպետք է տանել այն վայրերը (գոմ, բակ, արոտ, ձիակապարան և այլն), որտեղ գտնվում են, կամ տանելու օրից հաշված մեկ ու կես ամսվա ընթացքում եղել են քոսով հիվանդ կենդանիներ:

Քոսից անապահով տնտեսությունից բերված իրերը չպետք է թույլ տալ գործածել առանց ախտահանման:

Անասնաշենքերի մուտքի մոտ պետք է ունենալ արկղեր

ախտահանիչ նյութով թրջված թաղիքով՝ ոտնամաններն ախտահանելու համար:

Կենդանիներին սպասարկող անձնակազմի համար անառնաշենքերում պետք է ունենալ լվացարան, օճառ, ձեռքի խողանակ, ախտահանիչ լուծույթ ու որբիչ:

Առողջ կենդանիների մոտ չպետք է թողնել այն մարդկանց, որոնք շփում են ունեցել քոսով հիվանդ կենդանիների և վարակված իրերի հետ:

Տնտեսություն նոր բերված կենդանիներին, ինչպես նաև երկարատև գործուղումից վերադարձած կենդանիներին պետք է պահել առանձին, ենթարկել հակաքոսային մշակման և ապաթույլ տալ նրանց մուտքը ընդհանուր գոմը՝ անասնաբուժի կամ անասնաբուժակի թույլավությունից հետո:

Նոր բերված ոչխարհներին պետք է պահել կարանտինի տակ 30 օր և յուրաքանչյուր տաս օրը մեկ անգամ ենթարկել մանրազնին անասնաբուժական ստուգման: Ոչխարհներին կարանտինից հանել և առողջ հոտի հետ խառնել կարելի է միայն անասնաբուժակի կամ անասնաբուժի թույլավությամբ:

Ոչ մի դեպքում չպետք է քոսից անապահով տնտեսությունից անասուն բերել:

Չպետք է թույլ տալ այլ տնտեսությունների կենդանիներին մուտք գործելու անասնաշենքերը, կամ արոտավայրերը. նրանց համար պետք է ունենալ առանձին հարմարեցրած շենք և հատուկ առանձնացված արոտամաս, որտեղ տնտեսության կենդանիները չեն լինում և չեն արածում:

Կենդանիներին առնվազն մեկ ու կես ամիս չպետք է ուղարկել այն արոտավայրերը կամ ջրելատեղերը, որտեղ արտծել կամ ջրվել են քոսով հիվանդ կենդանիներ:

Այլ տնտեսություն գնալու դեպքում՝ կենդանիներին չպետք է տեղավորել այն անասնաշենքերը, որտեղ քոսով հիվանդ կենդանիներ կան: Դրա համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում տեղեկանալ տնտեսության քոսից ապահով լինելու մասին:

Քարվանսարաներում եղներին և ձիերին պետք է պահել առանձին տեղ, որտեղ ուրիշ կենդանիներ չեն լինում:

Ախտահանք, գոմերը, անասնաբազաները և ինվենտարը

տարեկան առնվազն երկու անգամ պետք է ենթարկել ախտահաճանան: կենդանիներին արտավայր ուղարկելուց հետո առաջին ամսվա ընթացքում անասնաշենքերը և բակերը պետք է խնամքով մաքրել, ախտահաճել և թողնել աղաս մինչև աշուն: Աշնանը, անասունների մսուրային պահպանման անցնելուց առաջ, անասնաշենքերն ու բակերը երկրորդ անգամ պետք է ախտահաճել և այնտեղ թողնել միայն առողջ կենդանիներին:

Քանի որ քոսը, ինչպես արդեն ասել ենք, հաճախ մի տեսակի կենդանուց մյուսին է անցնում, ուստի անտեսությունում կենդանիների տարրեր տեսակները պետք է պահել առանձին-առանձին:

Հեռու ձանապարհ գնալիս պետք է վերցնել ձիերին ջրելու դույլ և կերաման: Ձիերին՝ պետք է կերակրել և ջրել առանձին:

Ի՞՞նչ ՊԵՏՔ է ԱՆԵԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՔԱՍ ՀԱՅՑՆԱԲԵՐՎԵԼՈՒ ՊԵՊԲՈՒՄ

Երբ մի տնտեսության մեջ քոսով հիվանդ կամ կասկածելի կենդանի է նկատվում, տնտեսության ղեկավարը պարագոր է այդ մասին ամիշապես հայտնել անասնաբուժին: Կամ անասնաբուժակին: Միաժամանակ պետք է մեկուսացնել հիվանդ և կասկածելի կենդանիներին: Պետք է ախտահաճել այն շենքերը, որտեղ եղել են հիվանդ կենդանիներ և այնտեղ չթողնել ուրիշ կենդանիներ:

Անասնաբուժն խակույն պետք է միջոցներ ձեռք առնի հիվանդության դիագնոզը ձիշտ որոշելու համար և քոս հիվանդություն երեան բերելու դեմքում՝ պետք է միջոցներ ձեռք առնի քոսը լիկվիդացնելու:

Տնտեսության ղեկավարը քոս հիվանդությունը լիկվիդացնելու համար պետք է անշեղորհն կատարի անասնաբուժի կամ անասնաբուժակի բոլոր ցուցումները:

Քոսից անապահով տնտեսությունը կամ նրա այն մասը (գոմ, բակ, փերմա), որտեղ հայտնաբերվել է քոսը, ենթարկվում է կարանտինայի: Արգելվում է քոսից անապահով տնտեսությունից այլ տնտեսություն տանել անասուն և չափահանված ինվենտար, ինչպես նաև դրսից ընդունել առողջ կենդանիներ:

Տնտեսության կենդանիների՝ ամբողջ գլխաքանակը անաս-
նաբուժակի կողմից պետք է հետաղութիւն բաժանվի երեք խմբի՝
ա) քոսով հիվանդ կենդանիներ.

բ) կասկածելիներ, այսինքն այն կենդանիները, որոնք
քոս հիվանդության կլինիկական նշաններ չունեն, սակայն
շփման մեջ են եղել հիվանդների հետ, աշխատել են հիվանդ-
ների լծառարքով, գտնվել են միւնույն շենքի մեջ, կամ արա-
ծել են միւնույն արոտավայրում:

գ) առողջներ, որոնք ոչ մի շփում չեն ունեցել հիվանդ
կենդանիների հետ և գտնվում են ուրիշ շենք երում:

Այս երեք խմբերից յուրաքանչյուրը պետք է պահի մեռ-
կուսացված վիճակում և նրանց յուրաքանչյուրին պետք է
սպասարկի առանձին անձնակազմ:

Ամեն մի խումբ պետք է կերակրվի ու ջրվի առանձին և
արածացվի առանձին արոտամասում:

Հիվանդ կենդանիները պետք է ազատվեն աշխատանքից,
մեկուսացվեն առանձին շենքերում կամ արոտամասում, են-
թարկվեն հասուլ բուժման և ուժեղ սպիկու: Արգելվում է ան-
ապահով տնտեսությունից հիվանդ կենդանիներին դուրս տա-
նել:

Եթե հիվանդ կենդանիները անասնաբուժի կամ անաս-
նաբուժակի կողմից ուղարկվում են հատուկ բուժարան, բուժ-
ման համար, այդ գեղքում ճանապարհին պետք է ձեռք առնել
պրոֆիլակտիկ միջոցներ՝ հիվանդությունը չտարածելու համար:

Քասից կասկածելի կենդանիները պետք է ենթարկվեն հակա-
քոսային մշակման և նրանց շենքերը, լծառարքը և այլ իրերը
պետք է ենթարկվեն ախտահանման: Մինչև հակաքոսային
մշակման ենթարկելը՝ արգելվում է այս խմբի կենդանիներին
աշխատեցնել:

Առողջ կենդանիներին ամեն կերպ պետք է պաշտպանել
քոսով վարակվելուց: Նրանց կարելի է անտեսությունից գուրս
տանել միայն անասնաբուժի կամ անասնաբուժակի թույլ-
տվաւթյամբ և պրոֆիլակտիկ մշակման ենթարկելուց հետո:

Տնտեսության մեջ կենդանիների վերախմբավորում կա-
տարիլը, կամ նրանց մի շենքից ուրիշ շենք, մի նախրից
ուրիշ նախրի, կամ մի արոտավայրից ուրիշ արոտավայր տեղա-

փոխելը կատարվում է միայն անասնաբուժի կամ անասնաբուժակի թույլտվությամբ:

Կարանտինի ենթարկված տնտեսության մեջ քոսից կասկածելի և առողջ կենդանիների ամբողջ գլխաքանակը պետք յուրաքանչյուր օր ստուգման ենթարկվի, քոսի նոր ղեպքեր հայտնաբերելու դեպքում հիվանդներն ու կասկածելիներն իտկույն պետք է մեկուսացվեն և նըանց շենքերը պետք է ախտահանվեն:

Քոսով հիվանդ կենդանիներին սպասարկող անձնակազմը պետք է ունենա հատուկ արտահագուստ, որը պետք է օգտագործվի միայն աշխատանքի ժամանակ: Աշխատանքից հետո այդ արտահագուստը պետք է պահպի առանձին տեղ՝ հիվանդ կենդանիներին հատկացված շենքում և յուրաքանչյուր հինգ օրը մեկ անգամ ենթարկվի ախտահանման:

Ոչխարների հոտի մեջ քոսի կասկած լինելու դեպքում, ամբողջ հոտը պետք է ենթարկվի անհատական մանրակրկիտ ստուգման, կասկածելի ոչխարների մաշկից պետք է նյութ (մաշկի քերվածք) վերցվի և միկրոսկոպով ստուգվի: Թեկուզ մեկ ոչխարի վրա քոսի տիզ հայտնաբերվելու դեպքում՝ ամբողջ հոտը հայտարարվում է քոսից անապահով, իսկ քոսի տիզ չհայտնաբերվելու դեպքում՝ կասկածելի հոտը մեկ ամիս մնում է անասնաբուժական հակողության տակ և յուրաքանչյուր յոթ օրը մեկ անգամ կատարվում է միկրոսկոպիական ստուգում:

Ոչխարների հոտի մեջ քոս հայտնաբերվելու դեպքում 7—10 օրը մեկ անգամ, մինչև հոտի առողջանալը, յուրաքանչյուր ոչխար պետք է ենթարկվի անասնաբուժական ստուգման: Քոսով հիվանդ և կասկածելի ոչխարները պետք է իսկույն և եթ մեկուսացվեն, ենթարկվեն բուժման և անցնեն ուժեղացրած կերակրման: Զմեռ ժամանակ ոչխարների բուժումը պետք է կատարվի տաք շենքում:

Եթե հիվանդների մեկուսացման և անհատական բուժման միջոցով հնարավոր չէ կարճ ժամանակում արմատախիլ անել հիվանդությունը, այդ դեպքում հոտի ամբողջ գլխաքանակը ենթարկվում է լողացման:

Բուժումը պետք է կատարվի անասնաբուժի կամ անասնաբուժակի ղեկավարությամբ:

Ոչխարների բուժման հետ միաժամանակ հակաքոսային
մշակման պետք է ենթարկվեն նաև այծերը, շները, բանող և
այլ կենդանիները, որոնք սպասարկում են քոսով անապահով
տնտեսությանը, իսկ փարախները, անտանաբազաները և ամբողջ
ինվենտարը, սայլերը, ոտնամանները, հովիլների հագուստները
և այլ իրերը պետք է ենթարկվեն մանրակրկիտ ախտահանման:

Ոչխարների խուզը պետք է սկսել ամենից առաջ առողջ
հոտից: Խուզողը պետք է անապայման արտահաղուստ հագնի:
Քոսով անապահով հոտի ոչխարներին պետք է բուժել նրանց
պահպանման վայրում, որպեսզի նոր տերիտորիաներ և շենքեր
չվարակվեն:

Յուրաքանչյուր հոտի ոչխարների խուզից առաջ և հետո,
այն աղալները, հրապարակներն ու շենքերը, որտեղ կատարվել
է խուզը, գործիքները և այլ ինչենարը, ինչպես նաև արտա-
հագուստը, ձեռքերը և ոտնամանները խնամքով պետք է ախ-
տահանվին:

Քոսով անապահով հոտից ստացված բուրդը, մինչև արն-
տեսությունից գուրս տանելը, պետք է պահպի առանձին՝ կենդա-
նիների մուտքի համար անմատչելի շենքում: Այս բուրդը գուրս
տանել թույլատրվում է խուզից երկու ամիս հետո՝ առանց սահ-
մանափակման, կամ նախքան այդ ժամկետի վերջանալը՝ ամոռը
երկտակ փափուել տարայի մեջ, վրան նշանակելով «քոսով վա-
րակված», տաք լվացման մէջոցով ախտահանման համար:

Այդ բուրդը մթերման կետերում պետք է պահպի մեկուսաց-
ված միճակում:

Կենդանիներին սպասարկող և այցելող մարդիկ նրանց մոտ
գնալուց առաջ և հետո պետք է ախտահանեն իրենց ձեռքերն
ու ոտնամանները:

Քոսով անապահով տնտեսության մեջ բոլոր շները պետք
է կապված պահպին, իսկ հավերին չպետք է թողնել վարակված
տերիտորիայում ման գտը:

Քոսի զեմ պայցքարելու համար կիրառվող բոլոր տեսակի կաղ-
մակերպչական-տնտեսական և անասնաբուժա-սանիտարական մի-
ջոցառումների հետ միասին կոլխոզնիկների և սովորողների բան-
վորների մեջ պետք է անց կացնել նաև մասսայական կուլո-
լուսավորչական աշխատանք, բացատրելով քոսի էությունը,

տղերի կենսաբանական առանձնահատկությունները, քոսի տարածման բնական ձևնապարհները, նրա դեմ պայքարի ձևերը և բոլոր հակաքոսային միջոցառումների կարևորությունը։ Առանձնապես հովիվները պետք է պատրաստված լինեն և լավ իմանան քոսի դեմ պայքարելու միջոցառումները։

Քոսի դեմ պայքարելու համար անասնաբուժական աշխատողների կողմից ցույց տրվող բուժ-պրոֆիլակտիկ միջոցառումները ժամանակին կազմակերպելու համար պատասխանատու են տնտեսության դեկավարները։

ՔՈՍԻ ԲՈԽԻԺՈՒՄԸ

Բոլոր տեսակի կենդանիների քոսի բուժումը հիմնված է միենույն սկզբունքի վրա, այն է՝ ոչնչացնել կենդանու մարմնի վրա գանվող քոսի տղերը։


Քոսի բուժումը կատարվում է երկու հիմնական ձևով՝ անհատական և մասսայական։

Առանձին հիվանդ կենդանիներին բուժելու համար կենդանու մարմնի վարակված մասի վրա քոսում են որևէ ախտահանիչ նյութ, որն սպանում է տղերին։

Անհատական բուժումը կարելի է կիրառել գլխավորապես ձիերի և խոշոր եղջերավոր անսպունների վերաբերյալ, իսկ ոչ խարսների նկատմամբ նման ձեփ բուժումը հաճախ արդյունք չի տալիս, մասնավանդ երբ հիվանդությունը դգալի չափով տարածվել է։ Դրա համար ոչխարսների վերաբերյալ կիրառվում է բուժման առավելապես մասսայական ձեզ, այսինքն՝ բոլոր ոչխարսներին լողացնում են հատուկ պատրաստված լողարաններում ախտահանիչ լուծույթի մեջ, կամ հատուկ գաղափացիին երում ենթարկելով ծծմբագազի աղբեցության։

Բոլոր ախտահանիչ լուծույթերն աղղում են միայն քոսի տիպերի վրա, բայց նրանց ձվերը չեն ոչնչացնում։ Այդ ձվերից գուրս են գալիս նոր տղեր, որպեսզի ձվերից նոր գուրս եկած տղերը ոչնչանան, յոթ օրից հետո պետք է բուժումը կրկնել։


Հիվանդներին բուժելու համար ամենից առաջ պետք է խուզել նրանց մարմնի վարակված մասը և նրա շուրջը առնընդագն 10 սանտիմետր հեռավորության վրա եղած մազը և ապա



այդ մասերը լվանալ գոլ ($50-60^{\circ} \text{C}$) սապնաջրով, մոխրաջրով կամ կծու նատրիումի 0,5 տոկոսի լուծույթով. լավ կլինի նրանց վրա ավելացնել որևէ հակաքոսային նյութ՝ կրեոլին՝ 3 տոկոս, լիզոլ՝ 2 տոկոսի հաշվով:

Դրանից հետո պետք է ուշագրությամբ հեռացնել բոլոր կեղերն ու թեփուկները և նրանց այրել, կամ վրան ախտահանիչ նյութ լցնել: Եթե կեղերը շատ հաստ են, հարկավոր է գրանց փափկացնել տաք մոխրաջրով, ավելի լավ է՝ սապնաջրով: Մանրացած կեղերը և թեփուկները զգուշությամբ պետք է հեռացնել բութ դանակով և թողնել, որ կենդանու մարմինը չորանա:

Եթե մաշկի քոսով ախտահարված մասը մհծ տարածություն է բռնում և կենդանիների մաշկն ու բուրդը կեղտոտվել են, ապա պետք է կենդանու ամբողջ մաշկը լվանալ: Լվացումը կատարվում է սովորական խողանակների համը խողանակ-դուշի միջոցով:



Նկ. 5

Չմեռը կենդանիների լվացումը և բուժումը կատարվում է տաքացրած շենքերում (ջերմությունը՝ $12-15^{\circ}$ պակաս):

Բոսի բուժման ժամանակ հակաքոսային մշակման պետք է ենթարկել կենդանու մարմնի ամբողջ մակերեսը, առանձնապես ուշագրություն դարձնելով սեռական օրգանների, ականջների,

վերջավորությունների ներսի կողմի մազաղուրկ մակերեսների՝ միջնոտային տարածության, փորի ստորին մակերեսի և մաշկի ծալքերի վրա, որովհետև շատ հաճախ, մանավանդ տարվա ցուրտ եղանակին, այս տեղերումն են գտնվում քոսի տղերը:

Դեղանյութերի բոլոր ջրային լուծույթները գործադրում են տաքացրած վիճակում (կրեոլինի, լիզոլի, փայտի ձյութի կիթերը մինչև $50-60^{\circ}$ C, ծծմբակրային լուծույթը՝ մինչև 45° C), մնացած զեղանյութերը, բացառությամբ դյուրավառ նյութերի, գործադրվում են գոլ վիճակում ($40-45^{\circ}$ C):

Կենդանու ամբողջ մարմինը լվանալուց հետո, օրգս նիշտմի վրա գեղանյութերի թունավոր ներգործությունը կանխելու նողատակով՝ բուժիչ մշակումը պետք է կատարել հաջորդ օրը:

Այլ սուր հիվանդությունների հետևանքով բարձր ջերմություն ունեցող կենդանիներին հակաքոսային բուժման ենթարկել չի թույլատրվում:

Բուժումից հետո եթե թունավորման նշաններ, կամ մաշկի բորբոքում է նկատվում, պետք է բուժանյութ քսված տեղը լվանալ գոլ սապնաջրով, մաշկի վրա քսել ճարպ և բուժման այլ միջաց կիրառել:

Բուժումը վերջանալուց 5-7 օր հետո կենդանիներին պետք է լվանալ գոլ սապնաջրով:

Բուժման համար կարելի է գործածել հետեւյալ դեղերից մեկն ու մեկը՝

1. 3-5 մաս փայտի ձյութի (դյոգոտ) վրա լցնում են 100 մաս 15-20 տոկոսի տաք մոխրաջուր և թողնում 1-2 օր։ Ժամանակ առ ժամանակ հեղուկը ուժեղ կերպով թափահարում են, դրուշությամբ քամում։ Փայտի ձյութից և այդ վիճակում գործածում՝ բուժման համար։

2. 3-4 մաս օճառը լուծում են 100 մաս տաք ջրի մեջ, առաջ վրան ավելացնում՝ 5 մաս փայտի ձյութ (իսկ մարմաջաքոսը բուժելու համար 10 մաս) և ուժեղ կերպով խառնում, մինչև որ միապաղաղ, առանց նստվածքի կիթ է ստացվում։

3. Անարատ կամ երեսը քաշած կաթը տաքացնում են մինչև $70-80^{\circ}$ C, Յուրաքանչյուր 100 մաս կաթին ավելացնում են 5 մաս (մարմաջաքոսի ժամանակ մինչև 10 մաս) փայտի ձյութ և ուժեղ կերպով թափահարում՝ մինչև միապաղաղ կիթ է ստացվում։

4. 5 մաս կտավատի սերմին ավելացնում են 100 մաս ջուր և մեկ ժամ եռացնում: Ստացված լորձային հեղուկը քաշում են և դեռ չպաղած, յուրաքանչյուր 100 մաս հեղուկին ավելացնում են 5—10 մաս փայտի ձյութ և ուժեղ կերպով թափահարում՝ մինչև միապաղաղ լորձային մասսա է ստացվում:

5. 100 մաս կերոսինին ավելացնում են 10 մաս փայտի ձյութ, խնամքով խառնում և պահում մեկ օր: Մեկ օրից հետո կերոսինը քամում են:

Այս կերոսինի հետ կարելի է պատրաստել կիթեր՝ նրա մեկ մասի հետ խառնելով 5 մաս հետեյալ նյութերից որևէ մեկը՝

ա) թունդ մոխրաջուր,

բ) 3—5 տոկոսանի սապնաջրային լուծույթ,

գ) անարատ կամ երեսը քաշած կաթ, կամ

դ) 5 տոկոսանի կտավատի խաշուկ, ինչպես նկարագրված է վերևում:

6. Փայտի ու ձյութ

100 մաս

Մաղած մոխրիր

500—700 մաս

Զուր

800—1000 մաս և ուժեղ

թափահարել

Վերոհիշյալ բոլոր գեղախառնուրդները գործածվում են գոյն վիճակում (56°C) մաշկի ամրող մակերեսի վրա:

7. 10 լիտր 20 տոկոսանի մոխրաջուրը 800 գրամ ծծումբի հետ 2 ժամ եփում են, եփելու հետևանքով պակասած ջուրը լրացնում են: Ապա ավելացնում 2 կիլոգրամ փայտի ձյութ և 5 բողե եռացնում: Կինդանու մշակումից մեկ ժամ հետո գեղը պետք է մաքրել՝ մարմինը գաղջ սապնաջրով լվանալով: Այս նյութը պետք է քսել մարմինի մակերեսի կես մասից ոչ ավելի տարածության վրա:

Փայտի ձյութով պատրաստված վերոհիշյալ բոլոր գեղանյութերի գործածությունը պետք է 7-րդ օրը կրկնել, իսկ մնացած դեպքերում, և մարմաջաքրոսի ժամանակ, պետք է գործածել 3 անգամ՝ 1-ին, 4-րդ և 7-րդ օրը:

8. Մեկ կիլոգրամ չմարած կրին քիչ քիչ ջուր են ավելացնում, մինչև որ գոլորշիացումը դադարի և ջրի ընդհանուրը քանակը հասնի 30 լիտրի, ապա խառնում և թողնում են մի քանի ժամ: Նստվածք առաջանալուց հետո ջուրը քամում են և խառնում 5 կիլոգրամ նավթի հետ ու խնամքով թափահարում՝ մինչև

Հիապաղաղ կայուն կիթ է ստացվում: Կիթը գործածվում է պատրաստվելուց անմիջապես հետո՝ $20-25$ ջերմաստիճանում:

+30°C ջերմաստիճանից բարձր և 10 ջերմաստիճանից ցածր կիթը արագ կերպով շերտավորվում է և գործածության համար անպետք է դառնում:

9. 100 մաս զոլ ջրի մեջ պետք է լուծել 5 մաս օճառ, ավելացնել 10 մաս նավթ և թափահարել մինչև միապաղաղ կիթ դոյցվի:

Նավթ պարունակող բուժանյութերը կարելի է գործածել մարմնի մակերեսի միայն $\frac{1}{3}$ մասի վրա: 7 օր հետո բուժումը պետք է կրկնել:

Կերոսին պարունակող բոլոր բուժանյութերը կարելի է գործածել միանդամից մարմնի մակերեսի $\frac{1}{3}$ մասից ոչ ավելի տարածության վրա:

Նավթ և կերոսին պարունակող բուժանյութերը կարող են առաջացնել մաշկի բորբոքումներ և մազաթափություն, ուստի երկու օր հետո պետք է մաշկը լվանալ գաղջ սապնաջրով: ավելի լավ է քսելուց մեկ օր հետո մաշկի վրա քսել տաքացրած բուսական յուղ, իսկ երկու օր հետո լվանալ գաղջ սապնաջրով: Նավթի և կերոսինի պլրեպարատների նկատմամբ առանձնապես զգայուն են խոշոր եղջերավոր անասունները, ուստի այդ տեսակի կենդանիների համար օգտագործելուց պետք է զգուշանալ:

10. Մեկ լիտր տաք ջրի մեջ լուծել 5 գրամ օճառ, ասկա ավելացնել 70 գրամ կրեոլին: Գործածել երկու անգամ, իսկ քսուի հնացած գեպքերում 3 անգամ՝ 1-ին, 4-րդ և 7-րդ օրը, տաք վիճակում ($50-60^{\circ}\text{C}$) և միանդամից մարմնի ամբողջ մակերեսի վրա:

11. Մեկ մաս կրեոլինը խառնել մեկ մաս սկվալիտարի և 18 մաս օճառի (կամ 8 մաս յուղի) հետո Գործածելուց երկու օր հետո լվանալ: 7-րդ օրը բուժումը կրկնել:

Տեղական բուժման համար հանձնաբարվում է՝

12. Խտոնել 2 մաս կրեոլինը մեկ մաս փայտի ձյութի և 40 մաս բուսական յուղի հետ. Գործածել նախորդի պես:

13. Մեկ մաս կրեոլինը խառնել մեկ մաս կերոսինի և 4 մաս կաթի հետ Գործածել տաք վիճակում (50°C): 7-րդ օրը բուժումը կրկնել:

14. Մուրինի լինիմենտը, կարբուլաթթումեկմաս, կրեոլիներկումաս, սկիպիտար երկումաս, օճառ քսան մաս, ջուր 100 մաս:

Օճառը պետք է լուծել քիչ քանակությամբ տաք ջրի մեջ, աղա ավելացնել սկիպիտար և խնամքով խառնել:

Կարբուլաթթուն և կրեոլինը պետք է լուծել մնացած ջրի մեջ և անընդհատ խառնելով ավելացնել առաջին խառնուրդին:

Գործածել գոլ վիճակում: Դրդ օրը բուժումը կրկնել:

15. Վենական լինիմենտ. Փայտի ձյութ մեկ մաս, ծծումբ մեկ մաս, կանաչ սապոն 2 մաս, սպիրա 2 մաս:

Օրական պետք է քսել մարմի մակերեսի $\frac{1}{3}$ մասից ոչ ավելի տարածության վրա: Դրդ օրը բուժումը կրկնել:

16. Կրեոլին (կամ լիզոլ) 1 մաս

Սպիրա 1 մաս

Կանաչ սապոն 8 մաս

17. Ածմբակրային լուծույթ. 500 գրամ չմարած կրբը պետք է հանգնել քիչ քանակությամբ ջրով: Կիրը մարելուց հետո պետք է ավելացնել 1 կիլոգրամ ծծումբ և 10 լիտր ջուր և բուժումիսին եփել 1—2 ժամ: Նստվածք առաջանալուց հետո պետք է հեղուկը քամել և ավելացնել 1 տոկոսային հաշվով կրեոլին (կամ լիզոլ):

Գործածվում է տաք վիճակում ($45-50^{\circ} \text{C}$):

Մաշկը չորացնում է և վրան ճաքվածքներ կարող են առաջանալ:

18. Թրաֆ. Դեմյանօվիչի մերոդը. (Բուժումը հիպոսուլիֆիտով և աղաթթվով):

500 գրամ հիպոսուլիֆիտը լուծում են 500 գրամ ջրի մեջ, որից ստացվում է հիպոսուլֆիտի 50 տոկոսանի լուծույթ: Պատրաստվում է նաև աղաթթվի 10 տոկոսանի լուծույթ, որի համար 900 գրամ ջրի մեջ լուծում են 100 գրամ աղաթթու:

Կենդանու մաշկի վարակված մասը խուզելուց հետո պետք է գաղջ ջրով լվանալ և կեղերը մաքրել: Առաջին հերթին սովորական խողանակով պետք է քսել հիպոսուլֆիտի տաքացրած (40°C) լուծույթ կենդանու մարմի ամբողջ մակերեսին և թողնել մինչև լավ չորանատ: Մարմի վրա դոյցանում է հիպոսուլֆիտի բյուրեղների միավազաղ մոխրագույն-սպիտակ մի փառ ($շերտ$): Եթե մարմի վրա չմշակված մասեր են մնացել, պետք է իսկույն այդ մասերը մշակել և թողնել նորից մինչև չորանատ:

Դրանից հետո պետք է քսել աղաթթվի տաքացրած (40° C) լուծույթ նույնպես մարմնի ամբողջ մակերևսի վրա: Պետք է զգուշանալ, որ աղաթթվի լուծույթը աչքի մեջ չընկնի: Կենդանու մարմինը չորանալուց հետո աղաթթվի լուծույթով մշակումը կրկնվում է:

Մարմաջաքսի ժամանակ և քսուի մյուս տեսակների հնացած զեպքերում բուժումը պետք է կրկնել երրորդ օրը: Թարմ քսուի, ինչպես նաև վերնամաշկային ու մաշակակեր քսուերի ժամանակ՝ միանվագ մշակումը բավական է:

Բացի վերոհիշյալ նյութերից կարելի է գործածել նաև մի շարք այլ ախտահանիչ նյութեր: Սակայն ավելի լավ է դիմել անասնաբուժին կամ անասնաբուժակին և բուժումը կատարել նրանց խորհրդով և նրանց հսկողությամբ:

Քսուի մասսայական բուժման համար գործածում են գաղացիկ, կամ հատուկ սարքած լողարաններ:

Գոգախցիկներ. Գոգախցիկները հատուկ արկղեր կամ փոքր խցիկներ են, որտեղ քսով հիվանդ կենդանիները ենթարկվում են տղերին ոչնչացնող ծմբագազի աղղեցությանը:

Գոգախցիկները պատրաստվում են թե խոշոր և թե մանր կենդանիների համար: Մանր կենդանիների, օրինակ՝ ոչխարների գաղախցիկները հաճախ կառուցվում են երեք դլիս համար (նկ. 5):

Գոգախցիկներն ամեն կողմից պետք է ամուր փակված լինեն, որպեսզի գաղը չկարողանա խցիկից գուրս գալ: Կենդանու գլուխը պետք է խցիկից դուրս մնա, հակառակ դեպքում կենդանին կլանդիլի: Դրա համար ելքի գոների վրա թողնում են ձվաձև անցքեր, որտեղից կենդանու գլուխը դուրս են հանում: Այդ անցքի շուրջը ամբացնում են մի պարկ, որը ամուր հպվում է կենդանու վզին:

Խցիկի ներսի պատերի վրա կառուցվում են փայտե կախարաններ՝ լծասարքը, խնամքի պիտույքները և այլ իրեր կախելու համար, որոնք կենդանու հետ միաժամանակ ծխարկման են ենթարկվում:

Գոգախցիկը կառուցվում է բնակելի շենքերից առնվազն 200 մետր և ախոռներից առնվազն 50 մետր հեռավորության վրա: Կենդանուն մտցնում են խցիկի սեջ ետեւ դոնից բոլորու-

զին չոր վիճակում: Գլուխը ելքի դրան վրա եղած ձվածե անցքից գուրս են հանում, վզին հազցնում են փողսակը և երիզը ձգում կապում են:

Նախքան կենդանիներին խցիկ մտցնելը նրանց սեռական օրգանների անցքերի, հետանցքի և կրծի շուրջը վաղելին կամ յուղ պետք է քսել, որպեսզի մաշկի այդ մասերը ծծմբագազով գրդովելուց պաշտպանված լինեն: Կենդանին խցիկում պետք է պահպի 40—50 րոպե, որից հետո խցիկի ետևի դուռը բաց են անում և գաղը գուրս թողնում: Ապա առջեի դռնից կենդանուն շուտով և զգուշությամբ դուրս են հանում, որպեսզի գաղ չներշնչի և չխիղդի:

Որովհետեւ կենդանու գլուխին ու վիզը մնում են գուրս և գաղի ազգեցության չեն ենթարկվում, ապա խցիկից դուրս հանելուց հետո, նրա գլուխին ու վիզը պետք է բուժել հակաքոսային դեղերով, կամ այդ բուժումը կատարում են նախքան կենդանուն գաղախցիկը մտցնելը:

Կենդանու մշակման հետ միասին գաղախցիկում պետք է ախտահանել նաև լծասարքը, խնամքի երերը և այլ վարակված պիտույքը՝ կախելով նրանց գաղախցիկի պատերից: Այդտեղ պետք է նկատի ունենալ, որ ծծմբագազը վշացնում է լծասարքի մնանայից մասերը:


Գաղախցիկը բուժումը պետք է 7-րդ օրը կրկնել:

Գաղախցիկը քոսի բուժման հիմնական միջոցներից մեկն է, մանավանդ ձիերի համար, սակայն մեծ թվով հիվանդներ լինելու դեպքում, ինչպես նաև ոչխարների մասսայական բուժման համար անհաջմաս է:

Ոչխարների մասսայական բուժման համար ավելի նպատակահարմար է հակաքոսային լողարանը: Լողարանները կարեն է օգտագործել նաև քոսը կանխելու նախագրուշական նպատակով:

Հակաքոսային լողարան. Ոչխարների քոսի մասսայական բուժման համար ավելի ձեռնառ է նրանց լողացնել հատուկ լողարաններում՝ հակաքոսային լուծույթների մեջ: Այս ձեր նըսպատակահարմար է նաև այն տեսակետից, որ կենդանու ամբողջ մարմինը, գլխի հետ միասին միաժամանակ ենթարկվում է բուժանյութի ներգործության:

Լողարաններ կարելի է՝ պատրաստել ցեմենտից կամ տախ-
տակից 12—15 մետր երկարությամբ, 0,8—0,9 մետր լայնությամբ
և 1,5 մետր խորությամբ (նկ. 6):



Նկ. 6

Լողարանի մուտքի պատը պետք է ուղղահայաց լինի, որ-
պեսզի ոչխարներն անմիջապես ընկրմիլն հեղուկի մեջ: Լողա-
րանի ելքի պատը պետք է լինի թեք և աստիճանավոր (սանդ-
ղածկ), որպեսզի ոչխարներն առանց դժվարության կարողա-
նան լողարանից գուրս գալ:

Լողարանի մուտքի կողմը կառուցում են փոքրիկ փարախ,
ուր հավաքում են լողացման համար ջոկված ոչխարն րին: Լո-
ղարանի ելքի մոտ կառուցում են մի փոքր հրապարակ, թե-
քությամբ գեղի լողարանը, որի վրայով լողարանից գուրս եկած
ոչխարների վրայից թափվող հեղուկը ետ է հոսում, լցվում լո-
ղարանը:

Լողարանի մոտ պետք է պատրաստվի նաև օջախ մեկ կամ
մի քանի կաթսայով՝ ջուր տաքացնելու համար: Կաթսան մի
տախտակյա կիսախողովակով պետք է միանա մի մեծ տակած
հետ, որտեղ տաքացած ջրի հետ խառնվում է հակաքոսային

նյութը, որտեղից պատրաստված լուծույթը տեղափոխվում է դողաբանի մեջ:

Ոչխարներին լողացնելուց հետո նրանց մարմինը չորացնելու համար պետք է հատկացվի մաքուր, ախտահանված և ընդարձակ շենք, որը պետք է ունենա 4—5 բաժանմունք: Այդ շենքը պետք է ունենա լավ օդափոխելու հարմարություն և միջանցուկ քամիներից պատ լինի:

Հակաքոսային լողաբանների համար կարելի է գործածել հետեւյալ լուծույթներից մեկն ու մեկը՝

ա) Կրեոլինի լուծույթը. Յուրաքանչյուր 100 լիտր փափուկ ջրին պետք է ավելացնել 1,5—2 լիտր քարածխային կամ փայտային կրեոլին, կամ թե յուրաքանչյուր 97 լիտր ջրին՝ 3 լիտր սորֆային կրեոլին: Լուծույթի տաքությունը պետք է լինի 40° C:

բ) Կիզալի լուծույթը. 98,5 լիտր ջրի համար պետք է վերցնել 1,5 կիլոգրամ կիզալ և գործածել կրեոլինի լուծույթի նման:

գ) Ծխախոտի խաշուկ. 7,5 կիլոգրամ մանրած կամ 20 կիլոգրամ փոշի ծխախոտը 50 լիտր ջրի մեջ պետք է եռացնել 30 բուլե և ապա թողնել, որ 6 ժամ պարզվի, որից հետո քամել: Ստացված հեղուկի վրա պետք է ավելացնել մեկ կիլոգրամ կարբուրաթուր, մեկ կիլոգրամ կծուր նաև լիոն, ապա ավելացնել այնքան ջուր, որ ստացվի 250 լիտր հեղուկ:

դ) Ծծմբակրային լուծույթը. 12,5 կիլոգրամ մանրացրած ծծումբը և 7,5 կիլոգրամ չմարած կիրը խառնում են 15—20 լիտր ջրին: Դրա վրա ավելացնում են 125—150 լիտր ջուր և եփում 40 բուլե: Պարզվելուց հետո հեղուկն զգուշությամբ քամում են և խառնում 300 լիտր ջրի հետ: Լողաբանում լուծույթի տաքությունը պետք է լինի 38°—40°: Լուծույթի ներդործությունն ուժինացնելու նպատակով նրան ավելացնում են մեկ տոկոսի հաշվով կրեոլին կամ լիզոլ:

Լողացման տևողությունն է 3 րոպե:

Ոչխարների լողացումը. Ոչխարները, իրեն կանոն, պետք է լողացվեն խուզելուց առնվազն 6 օր հետո՝ տաք եղանակին, քամի չեղած ժամանակը խոկ եթե անհրաժեշտ է լողացնել ցուրտ եղանակներին, ապա պետք է ընտրել տաք և հանդարտ օրեր՝ հատուկ տաքացրած շենքում:

Սովորողում կամ կոլիոզում առաջացած քոսի հետևանքով

լողացում կատարելու գեղքում՝ տվյալ վայրում գտնվող բոլոր մենատնտեսների, աշխատավորների, կոլլուզոնիկների ոչխարները նույնպես պարտադիր կարգով պետք է լողացնել:

Լողացնելուց 6—7 օր առաջ ոչխարների ամբողջ վկանքանակը պետք է ենթարկել ստուգման։ Քոսի նշանները ունեցող ոչխարները պետք է առանձնացնել և նրանցից կաղմել առանձին խումբ։ Առանձնացրած ոչխարներին ենթարկում են տեղային հակաքոսային մշակման։ Մեկ երկու օր հետո փափկած կեղերը հեռացնում են, որից հետո կենդանին երկրորդ անգամ ենթարկում են տեղային բուժման։

Մաշկի վարակված մասերի բուժման համար գործածվում է հետևյալ լուծույթը։ Մեկ լիտր տաք ջրի մեջ լուծում են 50 գրամ կանաչ սալոն և ավելացնում 25 գրամ բուժիչ կրեոլին կամ 20 գրամ լիզոլի չեղուկը լավ պետք է խառնել և գործածել դոլ վիճակում ($45-50^{\circ}$ C):

Խուզումից առնվազն 6 օր հետո հակաքոսային լողացման ենթակա ոչխարները խստիվ որոշված ճանապարհով երեկոյան բերում են մշակման վայրը, որպեսզի ոչխարները մինչև առավոտ հանգստանանան։

Ոչխարների կերակրումը պետք է դադարիցնել լողացումից 10 ժամ առաջ, իսկ ջրումը՝ լողացումից 2 ժամ առաջ։

Ոչխարների հետ միասին լողացման վայրը պետք է բերվեն նաև հոտն սպասարկող կենդանիները՝ շները, բանող անաստունները, այծերը՝ լողացման համար և ինվենտարը՝ ախտահանման համար։

Ընդհանուր լողացումն սկսելուց 10 օր առաջ կրեոլինի կիթի թունավոր հատկությունը ստուգելու համար պետք է փորձնական լողացման ենթարկել $10-15$ գլուխ ամենասակավարժեք, բայց ոչ թույլ ոչխարներին։ Նրանց մոտ լողացումից հետո ուժ օրվա ընթացքում թունավորման նշաններ չկննելու գեղագում՝ կրեոլինը համարվում է գործածության համար պիտանի։

Լուծույթը պատրաստելու համար նախ պետք է չափել լողարանի ծավալը, կողարանը պետք է մինչև կեսը լցնել եռացած ջրով, ապա ավելացնել պաղ ջուր մինչև 40° C դառնալը, ինչպես նաև անհրաժեշտ քանակությամբ կրեոլին, ինչպես առված է վերեռում (էջ 26)։

Պատրաստված կիթը պետք է լավ խառնել, լողացման ժամանակ նրա տարրությունը պետք է լինի 37—38⁰ C. Քանի լուծույթը կեղտություն է, նրա ջերմաստիճանը պետք է դանդաղորեն բարձացնել մինչև 40—45⁰ C.

1500—2000 ոչխար լողացնելուց հետո կրեոլինի խոռությունը պետք է ավելացնել՝ քարածխային կրեոլինը մինչև 2—2,5 տոկոս, իսկ տորֆային կրեոլինը՝ մինչև 3,5 տոկոս:

5000 ոչխար լողացնելուց հետո լողարանի հեղուկը պետք է փոխել:

Տորֆային կրեոլինը ոչխարի բուրդը գեղնացնում և մազմթելերի դիմացկունությունը իջեցնում է, ուստի նրան կարելի է գործածել միայն կոշտաբուրդ ոչխարների համար, իսկ ծայրանեղ գեղքում, ուրիշ կրեոլին չլինելու դեպքում՝ նրբագեղմ ոչխարների համար, սակայն նրանց խուզելուց ոչ ուշ քան 20 օր հնատ:

Լողացնելու համար՝ մեկը բռնում է ցանկապատի մեջ գոնքված ոչխարներին և մի առ մի տալիս է լողարանի մոտ կանգնած երկու մարդկանց, որոնք ոչխարի ետևի կողմից բռնած՝ զգուշությամբ իջեցնում են լուծույթի մեջ մինչև կուրծքը, որից հետո բաց են թողնում ելքի ուղղությամբ: Լողարանի երկու կողմը կանգնած մարդկերկար ծողերի օգնությամբ ոչխարի զլուխը պետք է պահեն լուծույթից գուրս, որպեսզի չխեղդվի: Լողացման սկզբում ոչխարի զլուխը 1—2 վայրկյան պետք է սուզել հեղուկի մեջ ձեռքով՝ ծածկելով նրա քիթն ու աչքերը: Առանց ոչխարի զլուխն ու մեջքը թրջելու նրան լողարանից չպետք է գուրս հանել:

Յուրաքանչյուր ոչխար կրեոլինի լուծույթի մեջ պետք է մնա ճիշտ 2 րոպե:

Պետք է հետեւ, որ լողարանի լուծույթը սահմանված ջերմաստիճանից ցածր չլինի:

Լողացումն անցկացնող անասնաբուժական անձնակաղմը պետք է ունենալ ջերմաչափ՝ ջրի ջերմաստիճանը չափելու համար և ժամանակացույց՝

Լողարանից դուրս գալուց հետո ոչխարներին 10—15 րոպե պահում են ելքի հրապարակում, որտեղ նրանց մարմնի քոսով խիստ վարակված մասերն ու ականջների ներսի մակերեսը հակառասային լուծույթով թրջված խողանակով և շորով շփում են: Ապա

նըանց տանում են մոտակա հատուկ պատրաստված շենքը, որը
ինչպես վերեռմ առացինք, պետք է ունենա 4—5 բաժանմունք։
Աչխարներին պետք է տանել առաջին բաժանմունքը, իսկ երբ
այդ բաժանմունքը լցվում է, այսուղից նրանց պետք է տանել
երկրորդ բաժանմունքը, իսկ նրանց աեղը՝ առաջին բաժան-
մունքը պետք է թերել լողաբանից գուրս եկած նոր ոչխարներ։
Այսպիսի հերթականությամբ ոչխարներն անցնում են մինչև
վերջին բաժանմունքը, որտեղ մշտական հսկողության տակ
մնում են մինչև չորրանալը, կամ մինչև հաջորդ օրվա առավոտը։

Չորրացած ոչխարներին երեկոյան 1—2 ժամով կարելի է
ուղարկել արոտ, իսկ եթե նրանց մարմինը ուշ է չորանում, լո-
ղացումից 6—8 ժամ հետո կարելի է նրանց կերակրել շենքի մեջ։

Յամսականից բարձր գառներին, թույլ և լավ չղավզացած
ոչխարներին պետք է առանձնացնել և լողացնել վերջին հերթին։
Մինչև Յամսական գառներին և հղի մաքիներին լոցացնում են
ձեռքով, կիսատակառի կամ տաշտի մեջ, լուժիչ քարածխային
կրեոլինի (№ 6, 10) և կամ նավթոկրեոլինի (№ 11) 1,5 տոկոսանի
լուծույթով և անպայման անասնաբուժի ներկայությամբ։

Ոչխարների լողացումը 6—8 օր հետո կրկնում են։ Այդ
ժամանակամիջոցում ոչխարներին պետք է ենթարկել սառուց-
ման և այն ոչխարները, որոնց վրա նկատվում են քոսի նշան-
ներ, նախքան երկրորդ լողացումը պետք է ենթարկել տեղա-
կան բռժժման (տես էջ 21)։

Լողացրած ոչխարներին 8—10 օր պետք է մըսելուց, եր-
կար և հոգնեցուցիչ ճանապարհորդությունից պաշտպանել և
ուժեղ կերակրել։

Յուրաքանչյուր հակաքոսային լողացումից հետո ոչխար-
ներին պետք է պահել այնպիսի արոտավայրերում, որտեղ
առնվազն 1,5 ամիս քոսով հիվանդ կամ կասկածելի կենդանի-
ներ չեն արածել։ Նույնը վերաբերում է նաև ջրելատեղերին և
անցուղիներին։

ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

Բավական չէ քոսով հիվանդ կենդանիներին բռժել, այլ և
պետք է կիրառել այնպիսի հիմնական միջոցառումներ, որ շըր-
ջապատի քոս առաջացնող տղերը բոլորովին ոչնչանան։

Գոմերը, վարախները, հիվանդ կենդանիների հետ շփման մեջ եղած իրերը քոսի տարածման մշտական աղբյուր են հանդիսանում, հետևարար առողջ, կամ քոսից բուժված կենդանին, եթե վարակված շենքը բերվի, կամ շփում ունենա վարակված իրերի հետ, անպայման քոսով կվարակվի Նույնը պետք է անել նաև վարակված արտավայրերի նկատմամբ: Այս արսավայրերում, որտեղ քոսով հիվանդ կենդանիներ են գտնվում, կամ որոշ ժամանակ առաջ գտնվել են, այնտեղ արածող առողջ կենդանին քոսով անպայման կվարակվի: Ուստի անհրաժեշտ է վարակված շենքերը, ինամբ պիտույքները և այլ իրերն անպայման ախտահանել, իսկ վարակված արտավայրերն անվըտանդ դարձնել, վարակապերծ անել:

Վարակված շենքերն ախտահանելու համար պետք է նրանց հատակին գտնվող աղբի շերեր քերել տանել աղբանոց կամ անասնագերեզմանոց, կամ թե տանել գաշտ և ցանկալապատված մի տեղ կույտերով դիղել բիոտերմիկ ախտահանման համար 1,5 ամիս ժամանակով, որից հետո կարելի է այդ աղբը օգտագործել որպես վառելիք կամ պարարտանյութ: Վարակված ցամքարը, կերի մնացնորդները պետք է այրել: Շենքերի շրջապատիտերիտորիան պետք է հերկել:

Շենքի պատերը, հատակը, միջնապատերը, դռները, լուսամուտները, մասուրները և այլն անխստիր պետք է առատորեն թրչել ախտահանիչ լուծույթով, այնպես որ ախտահանիչ նյութը մտնի բոլոր ճեղքերը, խոռոչները, անկյունները և այլն:

Ախտահանումը կարելի է կատարել կրեոլինի կամ զտված կարբոլաթվի 5 տոկոսանի կամ լիզոլի 3 տոկոսանի տաք (80°C) լուծույթով և ապա պատերն սպիտակացնել 20 տոկոսանի թարմ մարած կրի լուծույթով: Մրգեսողի ախտահանիչ լուծույթի շերմաստիճանը չիջնի, պետք է նրան շարունակ տաքացնել:

Ախտահանումը կարելի է կատարել նաև քլորակրի 10 տոկոսանի լուծույթով: Քլորակրի պետք է պարունակի 25 տոկոսակատկիվ քլոր:

Քլորակրի լուծույթները պետք է պատրաստել բացօթյա և զգուշոթյամբ, որովհետև նրանից բարձրացող քլորի դազի միջոցով կարելի է թունավորվել:

Քլորակը ախտահանում կատարելուց հետո դռները և լուսամուտները պետք է բանալ և այնտեղ՝ կենդանի չթողնել մինչև որ քլոր գաղի հոտը բալորովին վերանա:

Մսուրներն ախտահանելուց հետո, նախքան նրանց օգտագործումը, պետք է տաք ջրով լվանալ ախտահանիչ նյութը նրանց վրայից հեռացնելու համար:

Լծասարքերը, սայլերը և ալլ իրերը պետք է ախտահանել կրեռլինի, կամ լիզոլի լուծույթներով:

Լծասարքերի կաշվե մասերին պետք է ուշ ձյութ քսել երկաթյա իրերը կարելի է շիկացնել կրակի վրա:

Այն բոլոր իրերը, որոնք դիմանում են եռացման, պետք է եփել 10 րոպե տեղողությամբ:

Ախտահանումից հետո շենքը պետք է լավ չորացնել և օդափոխել:

Կենդանիներին սպասարկող անձնակաղմի հագուստները պետք է լվանալ ջրով և սալոնով, չորացնել ու արդուկել, կամ թե ախտահանել եռացնելով, կամ գաղախցիկի միջոցով:

Զեռքերը և ոտնաժանները պետք է ախտահանել 3 տոկոսանի կրեռլինի, կամ լիզոլի լուծույթով:

Սրտավլայրերը, ջրելու տեղերը, ավաղանները և այլն վարակագերծելու համար, այդ տեղերը չպետք է մուտք գործեն հիվանդ կենդանիներն առնվազն 1 ու կես ամիս, իսկ անասնաշենքերն ու անասնաբազաները՝ 2 ամիս ժամանակով: Այդ ժամանակամիջոցում քոսի տղերն ու նրանց ձվերը ինքնարերաբար ոչնչանում են:

Այս ձևով էլ կարելի է ախտահանել այն կաշիները, որոնք ստացված են քոսով հիվանդ կենդանիներից: Եթե տնտեսության մեջ կա մեկուսացված շենք, այդտեղ պետք է այդ կաշիները պահել 2 ամիս, կամ թե 10 տոկոսանի կրալուծույթի մեջ՝ 6 ժամ:

Ախտահանումները լինում են ընթացիկ և եղրափակիչ: Շենքերի, լծասարքի, ձիասարքի, խնամքի պիտույքների և արտահաղուստի ընթացիկ ախտահանումը պետք է կատարվի քոսից անապահով տնտեսության մեջ հիվանդներին առանձնացնելուց անմիջապես հետո՝ քոսով հիվանդ և կասկածելի կենդանիների հակաքոռային մշակման հետ միաժամանակ:

Եղբափակիչ ախտահանում կատարվում է տնտեսության
մեջ՝ նախքան կարանտինի վերացումը:

Քոսով հիվանդ բոլոր խոշոր կենդանիներին բուժելուց 20
օր հետո և հակաքոսային միջոցառումները լրիվ կիրառելուց ու
եղբափակիչ ախտահանումները կատարելուց հետո տնտեսու-
թյունը հայտարարվում է քոսից ապահով և կարանտինը վե-
րացվում է:

Իսկ ոչխարաբուծական տնտեսությունը, ֆերման՝ կամ
հոտը համարվում է քոսից առողջացած և կարանտինը վերաց-
վում է, եթե քոսով հիվանդ կենդանիների առանձնացման վեր-
ջին դեպքից հետո երկու ամսվա ընթացքում հոտի մեջ քոսով
հիվանդ ոչխար չի հայտնաբերված:



Պատ. խմբագիր, Տ. Մելիքյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան

Գ. 09429 Պատվեր 45, տիրած 2000, Հեղ. 1,4 մամուլ, տպագր. 2 մամուլ,
Հանձնված է արտադրության 23/VIII 47 թ. ստորագրված է 31/III 48 թ.

Պետհատի տպարան, Երևան, Լենինի փ. № 65

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0009907

4464 2 0. 50 4.

A II
16834